ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ «ԱՐԵՒԱՆԿԱՐ» ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ

Գրական դիմանկարը ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարում նախընտրելի սեռ էր հայ շատ գրողների համար։ Ժանրի նկատմամբ մասնաւոր հետաքրքրութիւն էին ցուցաբերում յատկապէս արեւմտահայ գրողները (Յակոբ Պարոնեան, Գրիգոր Զոհրապ, Յարութիւն Ալփիար, Հրանտ Ասատուր, Սիպիլ, Թէոդիկ, Օննիկ Զիֆթէ-Սարաֆ)։ Սփիւռքահայ գրականութեան մէջ եւս այն շատ հրապուրիչ սեռ էր, ինչը, ցաւօք, չունեցաւ շարունակական ընթացք։ Այստեղ աչքի ընկնող «դիմանկարիչներից», օրինակ, Նշան Պէշիկթաշլեանը, հետեւելով Յակոբ Պարոնեանի, Գրիգոր Զոհրապի կողմից ձեւաւորուած գրական դիմանկարչութեան աւանդոյթներին, ստեղծեց «Թատերական դէմքեր» դիմանկարների շարքը՝ ուրոյն գրելաոճով, երգիծական շեշտադրութեամբ, ասելիքի թարմութեամբ։

* * *

Գրական դիմանկարը ակնարկային ենթասեռ է՝ համառօտ վաւերական, յուշագրական երկ՝ որեւէ երեւելի մարդու մասին։ Ընդհանրապէս սեռի բազմաշերտութիւնը դժուարացրել է տալ յստակ սահմանում, ամբողջապէս բնութագրել այն։

Գրականութեան տեսաբանները, հաշուի առնելով գրական դիմանկարի եզրերի անորոշութիւնը, այն փորձել են քննել որպէս միջին գրական սեռ, որ չէզոք դիրք է գրաւում «մեմուարային երկի»[1]

---

1 Հ. Մարգունի, *Ակնարկային գրականութեան ժանրերը. «Գրական ժանրեր. պատմական զարգացումը եւ ժամանակակից վիճակը»*, ԳԱ հրատարակութիւն, Երեւան 1973, էջ 487:

«գրական բնադատութեան ակնարկի»[2] եւ «էսսէատիպ յօդուածի»[3] միջեւ։

Մեր կարծիքով, գրական դիմանկարը հերոսի կեանքի առանձին դրուագների վրայ հիմնուած, նրա արտաքին ու ներքին մասնաւոր յատկանիշները ուրուագծող ակնարկային սեռ է։

Վերլուծելով արեւմտահայ գրական դիմանակարի սեռը՝ գրականագէտ Ա. Մակարեանը գրում է. «Արեւմտահայ գրականութեան մէջ գրական դիմանկարը զարգացաւ երեք ուղղութիւններով՝ գրական-բնադատական, յուշագրային-կենսագրական եւ գրական-գեղարուեստական»[4]։ Այս բաժանումը նա համարում է պայմանական, քանի որ յաճախ մի ուղղութեանը կարող էին ձուլուել միւս ուղղութեանը բնորոշ տարրեր, ուստի առանցքային պէտք է համարել իւրաքանչիւր ուղղութեան մէջ դրսեւորուող յատկանիշների գերակայութեան հարցը։

Արեւմտահայ գրականութեան մէջ սեռը երբեմն կոչւում էր վայրկենական, ուրուագծեր, կիսադէմքեր, դիմաստուերներ, «ալպոմ»՝ նպատակ ունենալով առաւել արտայայտիչ դարձնել կերպարի տեսանելի գծերը։

Վ. Թէքէեանի գրչին եւս հարազատ էին սեռի ստեղծագործական բացառիկ տարածքը, նիւթի, պատկերի, զգայութեան դրսեւորման գործնական հնարաւորութիւնները։ Նա իր դիմանկարներն անուանում է «արեւանկար»։ Արեւը Թէքէեանի գրական կեանքի կարեւոր խորհրդապատկերներից է՝ լոյսի, ջերմութեան, պայծառ մտքի գեղարուեստական նոյնականացումը։ Նա հմտօրէն ընտրում էր նախասիրած միակ կերպարին եւ ներկայացնում նրան փոքր ծաւալի, անառարկայ (անսիւժէ) պատումի տարածքում՝ ապացուցելով, որ գրական սեռը իր նեղ սահմանների մէջ կարող է լինել տարողունակ, ունենալ արտայայտման միջոցների լայն հնարաւորութիւններ։

Եւրոպական (մասնաւորապէս ֆրանսիական) գրական դիմանկարի մեթոդաբանութիւնը նախընտրած Վ. Թէքէեանը կենսագրութեան միջոցով հերոսի հոգեբանական խորքերը թափանցելու, ներաշխարհի գաղտնարանները բացայայտելու փորձեր էր անում՝ աչքի առաջ ունենալով նաեւ դիմանկար գրելու հայ գրականութեան ոչ պակաս հարուստ փորձը։

Եւրոպական գրական դիմանկարի հիմնադրի՝ Շարլ Սէնթ-Պէօվի (Charles-Augustin Sainte-Beuve) կողմից հերոսների կենսագրական մանրամասների բացայայտումը, նրանց հոգեբանական տարածքը ուսումնասիրելու նախասիրութիւնը կարծես թէ նոյնքան հարազատ էր Վահան Թէքէեանին։ Երկուսն էլ էական էին համարում ընտրուած հերոսի՝ կենսագրութեան միջոցով ներաշխարհի ծալքերը բացայայտելու գրողի մօտեցումը։ Սէնթ-Պէօվի պէս Վ. Թէքէեանը նախ՝ բացայայտում էր բնորդի անհատական, ինքնատիպ գծերը, ապա նկարում նրա կերպարը՝ ժամանակաշրջանի իրադարձութիւնների լոյսի տակ՝ կենսագրական կարեւոր դրուագների յայտագրումով։

Փարուած լինելով ֆրանսիական բանաստեղծական լաւագոյն աւանդներին, դրանք վարպետօրէն ձուլելով ազգային գրականութեանը՝ Վ. Թէքէեան-բանաստեղծը նախ եւ առաջ մեծ հրապարակագիր եւ ակնարկագիր է։ Կարելի է ասել, նրա հիմնական, գլխաւոր, նախընտրելի գրական սեռը եղել է հրապարակագրութիւնը՝ պատասխանատու, ծանր, իսկ դրան զուգահեռ քերթուածներ գրելու պահանջը լաւագոյն լիցքաթափումն էր, կուտակած ներոյժի պարպումը բանաստեղծութեան մուսայի առաջ։

Պոլսի եւ արտասահմանեան մամուլի էջերում ցրուած ու ընթերցողներին քիչ յայտնի հազարաւոր յօդուածների մէջ առանձնանում է «Արեւանկար»ների շարքը, ուր Վ. Թէքէեանը գրողի բացառիկ տեսողութեամբ, վստահ վրձնահարուածներով, հոգեբանի նուրբ դիտումներով պատկերում է իրեն ժամանակակից գործիչների խառնուածքային իւրայատկութիւնները, նրանց հոգեբանական քննակերպարը՝ պատկերաւոր հարուստ մտածողութիւնը միախառնելով հերոսի կենսագրութեանն ու այսպէս ուրուանկարելով նախորոշուած դիմանկարը։

«Արեւանկար»ները տպագրուել են Ի. դարասկզբի եգիպտահայ մամուլում՝ Աղեքսանդրիայում լոյս տեսնող «Ազատ Բեմ» շաբաթաթերթում, «Շիրակ» ամսաթերթում, Գահիրէում յայտնի «Նոր ժամանակներ» քաղաքական եւ գրական շաբաթաթերթում, «Լուսաբեր» ազգային, քաղաքական, տնտեսական եւ գրական լրագրում, Պոստոնում տպագրուող «Ազգ» շաբաթաթերթում։

---

2 Ժ. ՓԱԼԱՆԹԱՐԵԱՆ, *Գրական բնադատութեան տեսութեան եւ պատմութեան հարցեր*, ԵՊՀ հրատարակութիւն, Երեւան 1982, էջ 177:

3 Լ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, *Արեւմտահայ գրաբնադատական մտքի պատմութիւնից*, ԵՊՀ հրատարակութիւն, Երեւան 1982, էջ 209:

4 Ա. ՄԱԿԱՐԵԱՆ, *Արեւմտահայ գրական դիմանկարը*, ԵՊՀ հրատարակութիւն, Երեւան 2002, էջ 24:

Ի. դարի սկզբին Վ. Թէքէեանն աստիճանաբար ճշգրտում է իր տեղն ու դերը եգիպտահայ գրական եւ հասարակական-քաղաքական միջավայրերում՝ աչխոյժ ներկայութիւն ապահովելով ժամանակի բազմանուն, բազմաբովանդակ պարբերականների էջերում երբեմն որպէս շարքային թղթակցող, երբեմն՝ խստապահանջ յօդուածագիր, բառի կշիռը գնահատող սիւնակագիր կամ ընթերցողի հետ «բարոյական առեւտուր» անող խմբագրապետ։

Եգիպտոսի Նահանգային Վարչութեան ատենապետ Բարսեղ Օհանեանը, գնելով «Արաֆս» *տպարանը, ստանձնում է Երուանդ Օտեանի կողմից հիմնուած վերակազմեալների կուսակցական ոչ պաշտօնական* «Ազատ Բեմը» *պատչօնաթերթի կանոնաւոր հրատարակութիւնը՝ թերթի խմբագրութիւնը յանձնելով 1904թ. Եգիպտոս եկած Վ. Թէքէեանին, ինչը առիթ է դառնում, որ վերջինս ոչ միայն հարի վերակազմեալներին, այլեւ գործոն դեր կատարի որպէս մտաւորական կարեւոր ոյժ։*

Նոր-նոր Եգիպտոս ոտք դրած Վ. Թէքէեանը, անմիջապէս ներգրաւուելով Աղեքսանդրիայի հայ համայնքի մէջ, եռանդով մասնակցում է կուսակցութեան թերթի խմբագրութեանը, եւ, ինչպէս բնութագրում է Վ. Թէքէեանի զինակից ու գաղափարակից Արշակ Ալպոյաճեանը, «...Ունէր ֆաշֆշուֆն ու երգիծանքը սիրող բնաւորութիւն մը, անիկա «Ազատ Բեմ»ին մէջ կը գրէ յաճախ կէս-երգիծական եւ կէս-գրական նկարագրով յօդուածներ, ինչպէս «Արեւանկար»ներ ընդհանուր խորագրին տակ զանազան օրուան դէմքերու դիմաստուերները՝ երգիծական գիծերով ներկայացուած, որոնք մեծ հաճոյքով կը կարդացուէին»[5]։

«Արեւանկար»*ները հրատարակելիս Վ. Թէքէեանը գործածել է* Ասուպ *գրական ծածկանունը՝ մէկը իր տասնեակ ծածկանուններից, որ եղել է ամենաերկարակեացն ու յաճախ գործածելին։*

Աւելի ուշ՝ 1942 թուականի յունուարի 24ին «Արեւ» *թերթի 7019-րդ համարում Վ. Թէքէեանը պատմում է, թէ ինչպէս ծնուեց Ասուպը։*

1904 թուականին ընակութեան համար Աղեքսանդրիա տեղափոխուած Վ. Թէքէեանը, որ արդէն աշխատակցում էր «Ազատ Բեմ»*ին, Թիֆլիսի* «Մշակ»*ից ստանում է մի համար, որում Պարսկաստանից Աղեքսանդրիա եկած բժիշկ Կարապետ Փաշայեան խանը տպագրել էր Աղեքսանդրիայից ուղարկած մի թղթակցութիւն, ուր ամենասեւ գոյներով ներկայացրել էր հայկական Աղեքսանդրիան։*

Անխնայ քննադատուած էին դպրոցը, ուսուցիչները, երիտասարդութիւնը։ «Երբեմն միայն,- *գրում է Կ. Փաշայեանը,-* այս փըտած միջավայրէն ասուպի պէս կ'անցնէին արժէք ներկայացնող մտաւորական ուժեր...»[6]։ *Բազմաթիւ լուրջ պատասխաններ են հնչում Կ. Փաշայեանի անխորհուրդ գրութեան դէմ, անգամ իրեն համախոհ դաշնակցական ընկերների կողմից։ Լուրջ պատասխաններից յետոյ ցանկութիւն է առաջանում նաեւ երգիծել. մանաւանդ բժշկի արտաքին տեսքը հեշտացնում էր դա։ Վ. Թէքէեանը գրում է ոտանաւոր-գեղօն* (ballade) «Դոկ. Կ. Փաշայեան խանի Տ...գեղօնը» *վերնագրով։ Բարեկամները առաջարկում են այն տպագրել ծածկանունով։ Օննիկ Թաշճեանը ասում է.* «Քանի որ տոքթորը գրած է, թէ լաւ մտաւորականներ ալ ասուպի պէս երբեմն կ'անցնին հոսկէ... ա՛ռ քեզի մտաւորական, ստորագրէ Ասուպ»[7]։

Թէեւ Վ. Թէքէեանը այս ծածկանունն օգտագործել է նաեւ այլ յօդուածներ հրատարակելիս, սակայն «Արեւանկար»*ները եզակի բացառութեամբ տպագրել է այս ստորագրութեամբ։*

1904-05 թուականներին «Ազատ Բեմ»*ում Վ. Թէքէեանն ընթերցողին ներկայացրել է ութ արեւանկար՝* «Շաւարշ Հովիւեան», «Դանիէլ Վրդ.», «Բարթողիմէոս Վրդ.», «Յ. Յ. Շնորհիքեան», «Տոքթ. Ա. Ս. Յակոբեան», «Միհրան Թէլեան», «Նշան Մալումեան», «Սմբատ Բիւրատ»։

Թուարկուած դիմանկարների շարքը ցոյց է տալիս, որ Վ. Թէքէեանը մասնաւոր հետաքրքրութիւն է ունեցել հոգեւորականների կերպարների հանդէպ ոչ այնքան կրօնասիրութիւնից մըղուած, որքան ազգային հոգեւոր եւ մշակութային արժէքների, մարդկային բարոյական յատկանիշների գնահատման անհրաժեշտութիւնից, որոնց կրողն էին իր կողմից նախընտրուած «ընորդները»։

Արտաքին նկարագրի ուրուանկարային հատուածները դիմանկարներում ունեն կերպարների խառնուածքային առանձնայատկութիւնները չեշտելու նպատակ։ Այսպէս՝ «միջահասակ, մօրուսաւոր ու երկայնահեր» *Շաւարշ Հովիւեանը՝* «յեղափոխութեան հայ-

5 Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, *Վահան Թէքէեան իբր հանրային մարդ եւ հրապարակագիր*, Պէյրութ 1988, էջ 78։

6 ՄՇԱԿ, *«Թռուցիկ տպաւորութիւններ»*, N 121, 122, Թիֆլիս 1904։

7 ԱՐԵՒ, ԻԶ (1942), թիւ 7019, էջ 3։

րերու Բենիամինը», *Վ. Թէքէեանի արեւանկարում հազուագիւտ այն գործիչներից է, ովքեր, գաղափարի հուրն անշէջ պահելով, փոխանցել են արժանաւորներին։* «Ակնայ այս զաւակը,- *գրում է Վ. Թէքէեանը,-* անշուշտ իր հովիւ նախահայրերէն ժառանգած է մականունը, ասոր համար է, թերեւս, որ իր բալուածքը բլուրն ի վար վազող իր ոչխարներուն ետեւէն գայթ ի գայթ շտապելու երեւոյթ մը ունի»[8]։

Վ. Թէքէեանը Շաւարշ Հովիւեանի դիմանկար-ուրուագիծը սկսում է ներկայացնել նախեւառաջ արտաքին նկարագրի վերաբերեալ ուշագրաւ ճշգրտումներ կատարելով. «Միջահասակ, մօրուսաւոր ու երկայնահեր։ Այս վերջնոյն ուսանկեալ խոպոպներէն, ինչպէս իր պատմական լայնեզր գլխարկէն վերջերս հրաժարումը միակ զոհողութիւնն է, զոր ըրած է... իր սկզբունքներուն։ Յուսանք սակայն, թէ ձմեռուան վերադարձին հետ՝ հակառակ ձմրան օրերուն, որոնք կը կարճնան, պիտի երկննան նորէն մազերը, ի՜նչ փոյթ, եթէ անոնց մէջ շատցած ըլլան արծաթին երկնասմոյ խաւերը, արծաթին, զոր պիտի ցաւի այս անգամ ուրիշին հետ չկրնալ բաժնելուն, ա՛լ միայն իրեն պահելու ստիպուելուն համար»[9]։ *Խօսքին երբեմն միախառնուած մեղմ երգիծանքը ընդգծում է հեղինակի համակրանքն ու սէրը հերոսի նկատմամբ։ Հապճեպ, կտրուկ վրձնահարուածներով Վ. Թէքէեանը ցանկանում է ընթերցողին ներկայացնել այն խառնուածքային յատկանիշները, որոնք իր համար տպաւորիչ են, կարեւոր, բնութագրական. կարծես Վ. Թէքէեանն ինքն է յայտնաբերել դրանք, իր աչքն է միայն որսացել կերպարի վարքագիծը, շարժուձեւը, խօսելաոճը.* «Քիչ կը խօսի ու շատ չ'ըներ։ Աթոռին վրայ կը նստի՝ կարծես ուրիշին ալ տեղ ձգելու համար։ Գլուխը ուսերուն մէջ թաղուած, իրանը ընդառաջ եւ կռնակը կոր, բառերը միօրինակ ու հատակոտոր կ'իյնան շրթունքներէն, մինչ նայուածքը յաճախ միջոցին անորոշին մէջ կը լողայ։ Հանդիսաւոր օրերու մէջ սակայն Շաւարշ կանոնաւոր գրական ու ինչ որ աւելի դժուար է, բերականական խօսուածք մը ունի, որ համոզումները պաշտպանելու իր յամառ եղանակին չափ կը զարմացնէ այդ առիթներուն մէջ զինքը չտեսնողը»[10]։

8 Վ. Թէքէեան, *Յօդուածների ժողովածու երեք հատորով*, հատոր Ա. (1901-1910), Երեւան 2022, էջ 52։

9 Անդ։

10 Անդ, էջ 53։

Վ. Թէքէեանը դիմանկարելիս կարեւորում է իր հերոսների բարոյական նկարագիրը, չեշտում այն բացառիկ փոխաբերութիւններով։ Օրինակ՝ Դանիէլ վարդապետի մասին գրում է. «Ամենէն սիրուած, ամենէն յարգուած՝ Դանիէլ վարդապետ այն դէմքն է, որուն ի տես կրքերը կը լռեն ու կը բացուին սրտերը... ու բակներն ալ»[11]։

Վ. Թէքէեանը երբեք չի կատարում արտաքին դիմագծերի պատճէնումներ։ Նա արտաքին մանրամասների նկարագրութիւնից սահուն անցում է կատարում դէպի հոգէաշխարհի թաքուն անկիւնները եւ հակառակը։ Այս մեթոդով է, օրինակ, շարունակում դիմանկարել Դանիէլ վարդապետին. «Վրիժառու մարտիկ՝ Ղեւոնդներու սերունդէն. խաչի հետ սուրը հաւասար սիրով եւ ուժով կուրծքին վրայ սեղմած՝ իր ճոյգը միշտ վազցուցած է դաշտէ դաշտ՝ հարստահարուածներուն օգնութեան։

Ձիւնը, որ իր հոտին գլխուն տեղաց, հազիւ ճերմկցուցած է իր յորդաբուխ ու կարծրաթել մօրուքը՝ առանց բնաւ ասոր համար սառեցնելու սիրտը։

Թաւ յօնքերը մինչեւ աչքերուն վրայ կ'իյնան՝ աղուոր, պողպատի գոյն աչքերուն՝ կարծես սքողելու համար անոնցմէ անպակաս ակնյայտնի բարութիւնը, ապարդիւն ճիգ մը կեղծ խոժոռութեան, որ մշտամանուկ նայուածքին միամիտ ու կարծես քիչ մը խպնոտ քաղցրութիւնը սրբագրել պիտի ուզէր»[12]։

Վ. Թէքէեանը չէզոք դիմանկարող չէ։ Նախընտրելով սեղմ, բայց թանձր վրձնահարուածները՝ նա աւելաբան (hyperbolique) *պատկերներով եւ հետաքրքիր համեմատութիւններով է հարստացնում խօսքը։*

«Հայ Կաթուղիկէ ճարտարապետութեամբ անձինք մը՝ ամրութեան ու նրբութեան տպաւորութիւնը միանգամայն տուող. փակեղը անոր գմբեթն է կարծես, էջմիածնական գմբեթ մը, որ սրամտօրէն կը վերջացնէ «լեռնային հաւատոյ այդ վէմը»։

Իր բնավայրին լեռներուն ու ձորերուն մէջ շատ գլորած ըլլալուն համար է անշուշտ, որ այդ վէմը մամուռ չէ կապած. երիտասարդական աշխոյժը դեռ հոս իսկ լքած չէ զինքը»[13]։ *Վ. Թէքէեանը ընդգծում է այս* «ճառագայթարձակ դէմքով» *մարդու կենսագրական որոշ դրուագներ, անցեալի մասնաւոր իրողութիւններ, որոնք ամ-*

11 Անդ, էջ 54։

12 Անդ, էջ 53։

13 Անդ, էջ 58։

բողջացնում են նրա կերպարը։ Նա կենսագրական որոշ տարրեր միախառնում է արտաքին բարեմասնութիւններին, որոնք փոխադարձաբար լրացնում են միմեանց։

Պատկերաւոր, անվրէպ ու ճշգրիտ կառուցիկութեամբ ներկայացուող արտաքին մանրամասների նկարագրութեամբ առանձնանում է նաեւ մշակութային գործիչ Յովհաննէս Շնորհքեանի դիմանկարը։ «Առաջին երեւոյթով՝ անթերի դիւանական տիպար մը, որուն վարած երկարամեայ կեանքը թիկնաթոռին անվրդով ու հաստանիստ վեհութենէն բան մը անցուցած ըլլար անձին»[14]։ *Ընդհանրապէս Վ. Թէքէեանը սիրում է կերպարին դիմանկարել բազմակողմ՝ խառնուածքով, հոգեբանութեամբ, բարոյականութեամբ, հասարակական գործունէութեամբ, ընդգծել նրա առաւելութիւնները, յատկապէս արեւմտահայ հասարակական կեանքում ունեցած գովելի դերը՝ կարծէք ցանկանալով օրինակ դարձնել նրան։ Այսպէս, շարունակելով դիմանկարել Հ. Շնորհքեանին՝ Վ. Թէքէեանը կրկին իր համար ելակէտ է դարձնում կերպերի արտաքին եւ ներքին յատկանիշների փոխներթափանցման մեթոդը։* «Գլուխը, զոր մազի կարծես յետին թելը մասնաւոր պչրանքով մը լքած է՝ իր ողորկ ու սպիտակ լրջութեանը մէջ, ու դիմագծերուն ազնուական նրբութեամբը, հին յոյն փիլիսոփայի մը մարմարեայ գլուխը կը յիշեցնէ։ Մտածումը, ինչպէս հոս՝ արուեստագէտին ձեռակերտին մէջ, հոս ալ արթուն պահակի մը անշարժ ներկայութիւնը կը մատնէ՝ պատրաստ ամէն վայրկեան նշանառութեան։

Պարկեշտ քաղաքացի՝ բառին ընդարձակագոյն առումովը, այսպէս ընդունուած իր ամենէն ոխերիմ հակառակորդներէն անգամ, որոնց (ինչպէս նաեւ բարեկամներուն) գլխուն քիչ փորձանք չէ բացած իր յամառ օրինասիրութիւնը, մասնաւորապէս տեղական վերջին մեծ պայքարին միջոցին»[15]։

Վ. Թէքէեանի դիմանկարներին յատուկ է ձեւաւորման բնական ակունքը՝ բացառապէս իրական կեանքի ճշմարիտ լիցքերով եւ կենսական հարուստ տպաւորութիւններով սնուած։ Կարճ, դիպուկ, պատկերաւոր բնութագրումները ապացոյցն են այն բանի, որ հեղինակը հրաշալիօրէն ճանաչել է նախատիպերին, անձնապէս շփուել։ Անշուշտ, այս հանգամանքը շատ կարեւոր է անկողմնակալ, խորագէտ, հմուտ դիմանկարողի համար։

14 Անդ, էջ 59:
15 Անդ, էջ 60:

«Միհրան Թէլեան» *արեւանկարում Վ. Թէքէեանը նախ՝ հերոսի անուան եւ արեգակի զուգորդմամբ (իմա՝ Միհր-արեւ, Միհրը հայոց դիցարանում եղել է Արեւի, երկնային լոյսի եւ արդարութեան աստուածը։- Վ. Դ.-Ն. Մ.), ապա նաեւ արեւածին Վահագնի դիցաբանական կերպարի յիշատակումով ներկայացնում է Առաջնորդարանի համակրելի խորհրդատու փաստաբանին։ Բառընտրութեան եւ բառաստեղծման մէջ անմրցելի Վ. Թէքէեանը, շարունակելով արեւանկարել Միհրան Թէլեանին, ճեպանկարում է՝* «մաբրափայլ դէմք», «ոսկեթել, երկար, նեղ մօրուք», «ժպտաշուրթ ու հնչաձայն»[16]։ *Նպատակ չունենալով բոլոր կողմերով ներկայացնել Միհրան Թէլեանին՝ Վ. Թէքէեանը իրեն յատուկ մեղմ երգիծանքով վեր է հանում միայն նրա գործունէութեան դրուագներ, հոգեբանութեան առանձին դրսեւորումներ, հմտօրէն առանձնացնում, շեշտադրում է այն էական բնութագրական կողմերը, որոնք գրական սեռի փոքր տարածքում պէտք է տիպական դարձնեն հերոսին։* «Առաջնորդարանի իւղոտ ու կլոր պանիրին մէջ իյնալէն ի վեր իր անխախտ սկզբունքն է եւ իր անշեղելի ուղեգիծը (եթէ կրնանք այսպէս ըսել) խնամով ծածկուած մնալ վարագոյրին, այսինքն՝ պանիրին կեղեւին ետեւ։ Մօրուքին ծայրը սակայն յաճախ կը մատնէ զինք ու անկէ՛ կը բռնուի՝ գետնէգետին քաշկոտուելու համար»[17]։

Մէկ այլ՝ «Նշան Մալումեան» *դիմանկարը, մեզ յուշում է Վ. Թէքէեանի գրողական նախասիրութեան մի կարեւոր յատկանիշ՝ նախ՝ կարճ մուտք-բնորոշում հերոսի վերաբերեալ, ապա ասելիքը խորացնող դիմանկարային միջուկ։* «Հայ «ազգայինների»ին հունտը՝ Հայաստանէն Պոլիս ու Պոլսէն Արտասահման հողմավար նետուած, ամէնուրեք արմատ բռնած է ու նորընդոնոր բողոքոջներ տուած միշտ»[18]։ *Ակնյայտ է, որ հեղինակը լաւ ճանաչել է Մալումեանին, շփուել յատկապէս քաղաքական դաշտում, ուստի վստահօրէն, պարզունակ կաղապարներից դուրս դինամիկ խօսքով բնութագրում է նրա գործունէութիւնը։* «Քաղաքականութիւնը (նոյնիսկ իր տեղական-ազգային անձուկ սահմանին մէջ) Մալումեանի համար միակ շնչելի օդն է, կ'ենթադրեմ, թէ այնչափ հաւատացած է անոր օգտակարութեանը, որ ոեւէ, ըլլայ իսկ բարի գործ, երբ նախապէս թափառած չէ քաղաքականութեան մանուածապատ ճամբարներուն մէջ, հրապոյր չ'ունենար իր աչքին»[19]։

16 Անդ, էջ 63:
17 Անդ, էջ 64:
18 Անդ, էջ 97:
19 Անդ:

Արտաքին նկարագրից առաւել՝ Վ. Թէքէեանի համար կարեւոր ներքին յատկանիշների նկատմամբ համակրանքը կրկնապատկւում է հերոսի՝ հայերէնին փարուած լինելու, հայոց լեզուի նկատմամբ նախանձախնդիր վերաբերմունք ունենալու դէպքում։ Այդպիսին էր եգիպտահայ քաղաքական գործիչ Նշան Մալումեանը. «Բնիկ եգիպտահայ, բայց չցուցնէր վրայէն, հայերէնը կը խօսի հայկականութեան վկայեալ ուսուցչէ մը աւելի դիւրութեամբ եւ առատութեամբ։ Այն պատճառաւ գուցէ սակայն, որ իր խօսակցութիւնը ազգային կարեւոր պէտքի մը դարմանը կը մատնանշէ միշտ, կ'ընդարմացնէ երբեմն խօսակիցը»[20]։ *Վ. Թէքէեանը նկատում է, որ Մալումեանը ամէն քաղաքագէտի պէս իր գործունէութեամբ ձեռք է բերել է՛ւ բարեկամներ, է՛ւ թշնամիներ.* «Մինչդեռ առաջինները գովեստին մէջ մինչեւ երկինք կը բարձրացնեն զինք, երկրորդները Սանդարամետներու խորը նետուելու արժանի կը գտնեն... իր դիւա-(նա)գիտութիւնը»[21] *այսպէս յաջողուած բառախաղի օգնութեամբ շեշտելով* դեւ-դիւան *բառերի իմաստային զուգորդումը։*

«Ազատ Բեմ»*ի* «Արեւանկար»*ների նախատիպերը մեծ մասամբ Օսմանեան կայսրութիւնում ծնուած եւ Եգիպտոսում հաստատուած հանրային եւ մշակութային գործիչներ էին, որոնց վերաբերեալ Վ. Թէքէեանի տիպաբանական քննախօսութիւնը երբեմն մեղմ երգիծանքի միջոցով կատարում է ժամանակի արժանաւոր, ճշգրիտ ու անաչառ բացայայտումներ։*

Վ. Թէքէեանը սիրում է պատմական հպանցիկ լուսաբանումների, դիցաբանութեան, բանահիւսութեան, Աստուածաշնչի, համաշխարհային արուեստի նմոյշների առանձին յիշատակումներով աւելի պատկերաւոր, կենդանի դարձնել հերոսին, օրինակ՝ Շաւարշ Հովիւեանին անուանում է «յեղափոխութեան հայրերի Բենիամին», *Միհրան Թելեանի նախատիպարը համարում է հայոց դիցարանում ռազմի, արեւի աստուած Վահագնին,* «Նշան Մալումեան» *դիմանկարում Առաջնորդարանի եւ Քաղաքական Ժողովի ընտրութիւնների վերսկսումը համեմատում է Ֆրանսիացի նկարիչ Շարլ-Ֆրանսուա Մարշալի* (Charles-François Marchal 1825-1877) «Պենելոպ» (1868) *կտաւի հետ։*

Թէքէեանը սիրում է օգտագործել երգիծական արտայայտչամիջոցներ՝ սրամտութիւն, դրուագեան ծաղր, որոնք ազդեցիկ են դիմանկարի ներաշխարհը եւ արտաքին նկարագիրը բացայայտելու

20 Անդ։
21 Անդ։

ճանապարհին։ Այս առումով հետաքրքիր է Յովհաննէս Շնորհքեանի դիմանկարի այն հատուածը, ուր Թէքէեանը ներկայացնում է հերոսի հրատարակչական գործունէութիւնը. «Գիրի համար իր կանուխէն տածած սէրը սակայն, եթէ գրող մը չէ ըրած զինքը, տպարանապետ ըրած է, «պատուակալ» տպարանապետ մը, այսպէս ըսելու համար, որուն կը պարտինք «Արաքս»ը եւ որուն ամբողջ երազն է «էժանագին», օգտակար ու գեղեցիկ հրատարակութիւններ տալ մեր ժողովուրդին. հեղինակներուն կը մնայ աղօթել պարոն Շնորհիքեանի բախտին համար»[22]։

Երբեմն Թէքէեանը նոյն դիմանկարում կատարում է երկու բնորդների յատկանիշները հակադրող համեմատութիւն՝ արտաքին տեսքի այս կամ այն մասի հանգամանալից նկարագրութեամբ, ինչպէս վարւում է Սմբատ Բիւրատի եւ Միհրան Թէլեանի զուգահեռ դիմանկարման ժամանակ. «Պարոն Թէլեանի ոսկեգոյն, երկար ու ցանցառ մօրուքը եւ Պարոն Բիւրատի սեւ, խիտ հեղեղանման ստեւը երկու հակոտնեայ եղբայրներ են, որոնցմէ մէկը Հասարակածին, միւսը Բեւեռին մէջ ալ եթէ ծլած, ծնած ըլլային, դարձեալ ճակատագրականօրէն պիտի գային իրար գտնել, իրարու բով կանգնիլ։ Հաճոյքով կ'երեւակայեմ այդ երկու մօրուքներուն իրարու խառնուած, զիրար ողջագուրող պատկերը՝ Առաջնորդարանի Պարոն գրագէտին դիւանատան մութ մէկ անկիւնը՝ անոնց տէրերուն քիթ քիթի տուած եւ նոր մեքենայութիւն մը լարելու զբաղած ատեն...»[23]։

Սովորաբար «Ազատ Բեմ»*ում տպագրուած արեւանկարները աւարտւում են հեղինակի կանխագուշակումներով, կերպարի կեանքում վաղը կամ ապագայում կատարելի իրադարձութիւնների, վերաբերմունքի, գնահատականների կանխորոշմամբ։*

Յաւօք «Ազատ Բեմ»*ում լոյս տեսնող* «Արեւանկար» *դիմանկարների շարքը երկար չտեւեց։ Ճիշտ է, թերթը լոյս է տեսել 1903-1907 թուականներին, սակայն* «Արեւանկար» *խորագիրը կրող սիւնակում դիմանկարներով Վ. Թէքէեանը հանդէս է եկել իր խմբագրապետութեան շրջանում միայն՝ 1904-05 թուականներին։*

Վ. Թէքէեանի գրչին պատկանող ազատբեմեան անստորագիր խմբագրականները, ստորագիր յօդուածները եւ այլ հրապարակումներ շարունակում էին պահանջուած մնալ ընթերցողների կողմից մինչեւ 1906 թուականի Փետրուարը, որից յետոյ Վ. Թէ-

22 Անդ, էջ 61։
23 Անդ, էջ 107։

քէեանը մեկնում է Աղեքսանդրիայից եւ հաստատւում Գահիրէում՝ այս անգամ իր ընկեր ու բարեկամ Միքայէլ Կիւրճեանի հետ ձեռնարկած ու հրատարակած «Շիրակ» ամսաթերթում Ասուպ ծածկանունով շարունակելով արեւանկարել նախընտրելի հերոսներին՝ յաճախ վարժքային (էտիւդային) ճեպանկարումով, անթաքոյց հիացմունքի արտայայտութեամբ, մտերմիկ-բարեկամական ոճով, երբեմն էլ՝ նկատելի զուսպ ու չափաւոր երգիծանքով, ինչպէս որ, օրինակ, դիմանկարում է հայ գրող, խմբագիր, թարգմանիչ Մինաս Չերազին՝ գրելով. «Կանուխէն մուսաներու աշակերտ... Պ. Չերազ լուրջ ծնած է, ինչպէս ուրիշներ կաղ կամ կուզ կը ծնին, եւ եթէ լուրջ չըլլար, վստահաբար նուազ խնդացնող պիտի ըլլար»[24]:

Կենսագրական միջադէպային ակնարկները Վ. Թէքէեանը հարստացնում է դիպուկ դարձուածքներով, թեւաւոր խօսքերով: Օրինակ՝ «Մինաս Չերազ» *դիմանկարում գործածում է* «Հիմէնի հրապոյր» *դարձուածքը (Հիմէնը ամուսնութեան աստուածն է յունահռոմէական դիցաբանութեան մէջ)՝ ցանկանալով ընդգծել չամուսնացած Չերազի հանրանուէր կենցաղասիրութիւնը.* «Վաթսունի սեմը ոտֆ կոխած այս վաղեմի գործիչը, որ այսօրուանցներուն հայրը կրնար ըլլալ, ժամանակ ունեցած չէ իր հանրանուէր կենցաղին մէջ Հիմէնի հրապոյրներէն գրաւուելու»[25]: *Միայն մէկ-երկու կենսագրական դրուագներից յետոյ, ինչպէս բնորոշ է Վ. Թէքէեանի արեւանկարներին, անցում է կատարւում արտաքին բնութագրումին, որի միջոցով զուգահեռաբար բացւում է նաեւ հերոսի խառնուածքային այս կամ յատկանիշը.* «Բարձրահասակ, ակնոցակիր եւ խարտիշագոյն մօրուքով: Շիտակ քալուածքը բռնազբօս շիտակութեամբ մը յայտարար է իր սկզբունքներուն ուղղութենէն շեղիլ վախցող մէկու մը ճիգին. այդ ճիգը, որ մաս կազմած է իր ընդհանուր կերպարանքին, նուազ տեւականօրէն զգալի է իր թերթին մէջ»,- *գրում է Վ. Թէքէեանը Մինաս Չերազի մասին*[26]: *Ընդհանրապէս Թէքէեանի արեւանկարները մասամբ են կրում* «կենսագրական դիմանկարի» *յատկանիշներ. կենսագրական պատումները որքան էլ կարեւոր են, այնուամենայնիւ չեն ներկայացւում ծննդեան եւ աստիճանական զարգացման տրամաբանութեամբ, պարտադիր չեն հերոսի մանկութեանը, պատանեկութեանը վերաբերող յիշատակումները, եթէ դրանք չեն ծառայում կերպարակերտման նպատա-*

24 Անդ, էջ 119:
25 Անդ:
26 Անդ:

կադրումին: Վ. Թէքէեանը հերոսին երկար կենսագրելու կարիք չունի, որովհետեւ նրան յաջողւում է մի քանի բառով ուրուանկարել նրա գործունէութիւնը, աշխատանքը, զբաղմունքը: «Բանաստեղծ, ուսուցիչ, ճառախօս, երեսփոխան եւ հրապարակագիր Պարոն Չերազը այս ամէնը եղած է միաժամանակ, ատեն մը, ուր դեռ բիչ էր ըլլալ այս ամէնը, եւ կը ստեղծուէին տակաւին խորհրդականութեան ու պատուիրակութեանց բարտուղարութեան պաշտօններ...»[27],- *այսպէս կարճ ու յստակ կարող է միայն թուարկել Վ. Թէքէեանը՝ վստահ, որ իր հերոսի մասին ամէն ինչ ասուած է:*

* * *

1906 թուականի Դեկտեմբերի 1ին Վ. Թէքէեանը Գահիրէում ձեռնամուխ է լինում «Նոր ժամանակներ» *շաբաթաթերթի տպագրութեանը: Այն ձեւով նման էր* «Շիրակ»*ին, ունէր* «բազմակողմանի բովանդակութիւն»: *Ա. Ալպոյաճեանը կարծում էր, որ* «թերեւս անփորձութիւնը պատճառ կ'ըլլայ, որ «Նոր ժամանակներ»ը միայն երեք թիւ հրատարակուի»[28]:

«Նոր ժամանակներ» *շաբաթաթերթում Վ. Թէքէեանը տպագրում է* «Լեւոն Մկրտիչեան» *դիմանկարը՝ կրկին այն ստորագրելով Ասուպ:*

Ազգային գործիչ, մտաւորական Լեւոն Մկրտիչեանը, որ յետոյ պէտք է դառնար Վ. Թէքէեանի հրապարակագրական արդիւնալի կեանքի առանցքային թերթի՝ «Արեւ»*ի արտօնատէրը, արեւանկարում պատկերուած է սրտեռանդ համակրութեամբ:*

Ինքնադրոշմ համեմատութիւններով Վ. Թէքէեանը յայտագրծում է Լ. Մկրտիչեանի դիմապատկերը՝ հաղորդական դարձնելով ընթերցողին նրա անձնային եզակի որակներին: «Մարդկային բազմազան դէմքերը,- *գրում է Վ. Թէքէեանը,-* տպագրական տառերու տեսակները կը յիշեցնեն ինծի: Կան բոլորագիր, ծաղկագիր, Արամեան, կոթիկ, շեղագիր եւ նոյնիսկ... batard դէմքեր: Մկրտիչեանի դէմքը, սեփ-սեւ աչքերէն սկսեալ մինչեւ դիմագիծերուն ցայտուն կանոնաւորութիւնն ու մօրուքին բառանկիւնը, երկաթագիր է, թանձրատիպ երկաթագիր մը, գլխատառ, ըստ ոմանց՝ «Ֆ», մինչ իր ընտանեական եւ բարեկամական շրջանակներուն մէջ «Լ» միայն, «Լ» պարզապէս...: Այդ գլխատառը բիչ մը «ճերմակ ելլել» սկսած է հիմա ո՛չ

27 Անդ, էջ 121:
28 Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 88:

անոր համար, որ շատոնց ձուլուած է, այլ անոր համար, անշուշտ, որ շա՛տ ծառայած է...»[29]։

Ուսուցիչ, առեւտրական, քարտուղար, Թաղական Խորհրդի քարտուղար, որոնցից յետոյ միայն՝ դատական պաշտօնակատար,- այսպէս է ճեպանկարում Վ. Թէքէեանը Լեւոն Մկրտիչեանին՝ ազգային գաղափարների փոխանցիկ եւ անդիմադրելի զօրութեամբ օժտուած այդ պոլսեցուն, որ, յաջողապէս մրցում էր դատարանների եւրոպացի պաշտօնակիցների հետ։ Նրա յօդուածները միշտ նուիրուած էին հայկական հարցին եւ հարցերի պաշտպանութեանը՝ պատիւ բերելով իրեն։

Վ. Թէքէեանը Լ. Մկրտիչեանի արեւանկարը խարսխում է վաւերականութեան վրայ։ Նրա անհատական բնութագրին վերաբերող անդրադարձը ամբողջանում է փաստերի եւ կենսագրական որոշ մանրամասների ակնարկներով։

Եթէ նախորդ դիմանկարներում տիրապետում է բնութագրումների պարզ ստուերագծումը՝ երբեմն ուրուագծային անզարդ լուծումներով, ապա «Լեւոն Մկրտիչեան» արեւանկարն աչքի է ընկնում բնորոշումների համեմատաբար ծաւալուն, թանձր վրձնահարուածներով։ Բոլոր դէպքերում Վ. Թէքէեանին միշտ հետաքրքրում է ընտրած հերոսի բնաւորութեան գծերի ընդգծումը, որ ամբողջացնում է արտաքին նկարագրութեան առանձին հատուածները։

Սովորաբար Վ. Թէքէեանը ոչ միայն ներկայացնում է իր հերոսների՝ իբրեւ բնորդների ուրուանկարները, այլեւ զանազան ուշագրաւ կենսագրական փաստերի այլաբանական ակնարկումներով փորձում լրացնել, ամբողջացնել նրանց դիմանկարների նկարագրութիւնները։ Օրինակ՝ Լ. Մկրտիչեանի մասին գրում է. «Բերդը, զոր կը պաշտպանէր այն ատեն, անոնցմէ ալ, որոնք պէտք էին իյնալ, ինչպէս ինկաւ ալ, ոչ ոք ըսած է սակայն, թէ իբրեւ վարձկան մը կռուեցաւ հոն, այնքան եռանդ եւ հոգի դրաւ ընդհարումին մէջ, այնքան անհաշիւ ինքզինքը վատնեց այնտեղ։ Կռիւին դադրելէն յետոյ (առանց հաշտութեան կնքումի) Մկրտիչեան ինքզինքը փոխադրուած գտաւ դատական մթնոլորտին մէջ ո՛չ անշուշտ «հանգստեան» համար, այլ թերեւս իբրեւ վարձատրութիւն «դժբախտ քաջութեան»»[30]։

29 Վ. ԹԷՔԷԵԱՆ, *Յօդուածների ժողովածու*, նշ. աշխ., էջ 121։
30 Անդ։

Վ. Թէքէեանը ակնարկում է Լ. Մկրտիչեանի վեցամեայ պաշտօնավարումը Առաջնորդարանում։ Նա ստիպուած հրաժարւում է պաշտօնից ընդդիմադիրների հետ երկարատեւ դժնդակից պայքար մղելուց յետոյ։ Նոր ընտրութիւնների ժամանակ պարտութիւն է կրում այն ժամանակուայ Թաղական Խորհրդից։ Սրանից յետոյ Լ. Մկրտիչեանը տեղափոխւում է դատական համակարգ՝ վարելով բազմակնճիռ, կարեւոր եւ ծանր գործեր։

Ընդհանրապէս Թէքէեանը հերոսի կենսագրական որեւէ դրուագի մասին խօսելիս նախընտրում է ակնարկային, երբեմն անուղղակի, այլաբանական գրելաոճը. ընթերցողից պահանջւում է տեղեակ լինել կենսագրական փաստերին՝ հասկանալու համար հեղինակի այլաբանական խօսքը։

* * *

1907 թուականի ապրիլի 20ից Պոսթոնում սկսում է տպագրուել «Ազգ» *ազգային, գրական եւ քաղաքական շաբաթաթերթը՝ Ամերիկայի ազատական կուսակցութեան* «լայն, անկանխակալ ու ճշմարտապաշտ ոգիէն բխած»[31] *օրգանը։ Թերթի էջերում Վ. Թէքէեանը յօդուածներ է տպագրել՝ սկսած 1908 թուականից։* «Ազգ» *թերթում նա տպագրել է* «Մուրատ» *արեւանկարը, որ, որպէս բացառութիւն, ստորագրուած է ոչ թէ Ասուպ, այլ՝ Վահան Թէքէեան։*

Մուրատը (իմա՝ Համբարձում Պոյաճեան. – Վ. Դ., Ն. Մ.), որ 1894 թուականին ղեկավարել էր Սասունի ապստամբութիւնը եւ ձերբակալուել, 1905 թուականին բանտից փախչում է Եւրոպա եւ հաստատւում Փարիզում։ Վերակազմեալ հնչակեանների հետ համերաշխութիւն ստեղծելու համար 1907 թուականին այցելում է Եգիպտոս եւ հանդիպում ազգային յեղափոխական առաջնորդ Միհրան Տամատեանի հետ, որ 1900ականներին արդէն հաստատուել էր Եգիպտոսում։ Մուրատին ամէնուր ընդունում են ցընծութեամբ ու խանդավառութեամբ։

Վ. Թէքէեանը, դիմանկարի առաջին իսկ տողերից սկսած, անթաքոյց եռանդով, լուսազարդ սիրով սկսում է արեւանկարել Մուրատին՝ նախ՝ ուրուագծային վրձնահարուածներով, ապա աստիճանաբար թանձրացող բնութագրումներով՝ արտաքին պատկերաւոր նկարագրութիւնը թողնելով վերջում. «Ոսկրոտ, նիհար եւ բարձրահասակ, աղերեկ ընչացքով եւ բունքերով, լայն գմբեթարդ

31 ԱԶԳ, Ա. (1907), Պոսթոն, էջ 1։

ճակատով, զոր աւելի լայնցուցած ու ակօսած են բանտի տարիները, որոնք կրկին կը հաշուուին: Մուրատ կը յիշեցնէ այն ընտիր ածուխին հրաշէկ կտորը, զոր մեր մայրերը (ինչպէս անշուշտ իր զմայլելի մայրն ալ) առջի գիշերուընէ «կը թաղեն» ու յաջորդ առաւօտուն մոխիրին տակէն կը հանեն՝ դեռ նոյնիսկ վառ եւ դիմացկուն:

Հիմա այդ առաւօտն է թերեւս, ձմրան առաւօտ անշուշտ, ուր կրակը իր ջերմութիւնը պիտի սփռէ մեր ցրտացած սրտերուն մէջ»[32]:

«Մուրատ» *արեւանկարում հերոսի կենսագրական տարածքը մեծ է, աւելի մօտ յուշագրական-կենսագրական նիւթի* «դիմանկարումին»: *Վ. Թէքէեանը, ընտրել է Մուրատի կեանքի եղերական ու ծանր դրուագները, որոնց վերաբերեալ իր ակնարկները վաւերական նիւթ են հաղորդում հերոսի մաքառումների, հալածանքներով լի կեանքի մասին:* «Եւ Մուրատ երեւցաւ ու ժպտեցաւ նախ, եւ Մուրատի ժպիտը ամենէն անուշ, ամենէն մաքուր ժպիտներէն է, զոր տեսած ըլլամ: Յետոյ խօսեցաւ, եւ իր ձայնը ամենէն մեղմ, ամենէն խոնարհ ձայնն է, զոր երբեմ պիտի չլսեմ ուրիշ յեղափոխական նշանաւոր կամ անշան գործիչի մը բերնէն: Յետոյ վիճեցաւ, եւ իր կորովը, իր մտքին արթնութիւնն ու իր համոզումներուն վրայ անդրդուելիութիւնը հիացուցին ամենքս, այնքա՛ն, որ վայրկեան մը վերջը մոռցանք, թէ դիմացիննիս Մուրատն է...»[33]: *Վ. Թէքէեանին յաջողուել է վարպետօրէն միախառնել հերոսի կենսագրութիւնը, յուշը եւ արտաքինի նկարագրութիւնը, որի նպատակն է հերոսի ներաշխարհի, էութեան բացայայտումը.* «Եւ այս ամբողջ երկար, քաղաքավար մաքառումին մէջ Մուրատի ձայնը իր մեղմութեան մէջ կը գտնէր ամրութեան անկասկածելի շեշտեր, որոնց վրայ կը կոխէր տիտանական ուժով մը, մինչ նայուածքը կը կայծկլտար մտածումի անհատնում կտորուանքներով, զորս խօսքը չէր հասներ թարգմանելու, եւ ժպիտը, միշտ նոյն, նուրբ ու անուշ իր ժպիտը ատեն-ատեն կը ծագէր դէմքին վրայ՝ կարծես սրբագրել ուզելով իր խօսքերուն ու շարժումներուն ակամայ խստութիւնը...»[34]:

Ընդհանրապէս Վ. Թէքէեանը դիմանկարելիս նպատակ չունի բոլորապէս ներկայացնել կերպարին, այլ գծում է այն, ինչ ինքը համարում է յատկանշական, կարեւոր, էական: Վ. Թէքէեանը, վրստահօրէն գիտակցելով դիմանկարի սեռային իւրայատկութիւնները, կատարում է մերթ ուրուագծային, մերթ համեմատաբար ծա-

32 Վ. ԹԷՔԷԵԱՆ, *Յօդուածների ժողովածու*, էջ 128:
33 Անդ, էջ 127:
34 Անդ, էջ 128:

ւալուն ու խորագնայ բնութագրումներ՝ հեռու քննադատական վարժքի մեթոդաբանութիւնից, կերպարի արտաքին եւ ներքին յատկանիշների վերաբերեալ քննախօսութիւնից: Կարեւորը սեղմ, բայց տպաւորիչ բնութագրումներն են՝ գեղարուեստական ուրոյն ոճաւորմամբ, որոնց մէջ չի կորչում կերպարի անհատականութիւնը, ընդհակառակը, ճանաչելի են նախատիպային այն բնութագրիչները, որոնք խստագոյնս պահպանուած են:

* * *

Դեռեւս 1904 թուականի Դեկտեմբերի 1ից իր հրատարակութիւնը սկսած «Լուսաբեր» *լրագիրը, ունենալով անկուսակցական նկարագիր, կարեւոր ամպիոն էր* «արզուեանականների» *դէմ մղուող պայքարում: Արփիար Արփիարեանի դաւադիր սպանութիւնից յետոյ խմբագրի գործն առաջարկւում է Վ. Թէքէեանին:* «Լուսաբեր»*ում նա հանդէս է գալիս ոչ միայն խմբագրականներով, այլեւ շարունակում է հրատարակել* «Արեւանկար» *դիմանկարների շարքը՝ Ասուպ ստորագրութեամբ: Մինչեւ 1908 թուականը եւ դրանից յետոյ էլ Վ. Թէքէեանը աշխատակցում է* «Լուսաբեր»*ին: Այդ ընթացքում Վ. Թէքէեանը անթաքոյց շահագրգռութիւններ ունէր Մկրտիչ Խրիմեանի յաջորդի ընտրութեան հարցի նկատմամբ: Մաղաքիա Օրմանեանն ընտրուելու ջանքեր էր գործադրում: Այդ նպատակով Եգիպտոս է ուղարկւում Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանը, որի դիմանկարն էլ արեւանկարում է Վ. Թէքէեանը:*

Գրուածքի առաւել ծաւալուն հատուածում Վ. Թէքէեանը ուրուագծում է Յովհաննէս քահանայ Մկրեանի դիմանկարը՝ արտաքին մանրամասների շեշտադրումով. «Պարթեւ հասակ, սպիտակփայլ բարեձեւ մօրուք, նայուածքը՝ ծանր եւ խօսքը՝ կշռուած այնպէս, ինչպէս դրամատան մը արկղակալը ոսկիները կը կշռէ իր նուրբ նժարին վրայ, Մկրեան Հայր դեռ պահած է քալուածքին առուգութիւնը, որ Պոլսոյ ամենէն ընտրեալ սալօններուն մէջ մտնող-ելլող քահանայի բնավայել իր դիւրաշարժութիւնը կուտայ իրեն: Ատոր հետ միասին գիտէ ժպտիլ (հիմա քիչ մը փոթփոթուած դէմքին ժպիտովը) եւ սաստեալ ալ, երբ պէտքը տեսնէ»[35]:

Սակայն հասկանալի է, որ Վ. Թէքէեանի նպատակը միայն կերպարի գնահատումը չէ, այլ Մաղաքիա Օրմանեանի կաթողիկո-

35 Անդ, էջ 137:

սացման գաղափարի իրականացման համար Եգիպտոս եկած Յովհաննէս քահանայ Մկրտեանին քօղազերծելը՝ ի նպաստ Մատթէոս Իզմիրլեանի։ «Արեւանկար»-*ի վերջում Վ. Թէքէեանը հեգնանքով գրում է.* «Լաւագոյն չ'ըլլա՞ր, որ պատկառելի պատուիրակը իր դիւանագիտական պայուսակը մէկ կողմ դնէ եւ փոխանակ անտառածին Սադիրոսի (նկատի ունի յունական դիցաբանութեան մէջ պըտղաբերութեան հովանաւոր ոգուն՝ Սատիրին) մը ցանկութիւնը գոհացնել աշխատելուն (նկատի ունի Մ. Օրմանեանին), նորէն ոսկեկապ խնամութիւն մը կնքել ջանայ այստեղ...»[36]։

Սա այն եզակի արեւանկարներից է, որտեղ Թէքէեանը դիմել է քննադատական խօսքին, որ ընդգրկուն չէ, աչքի է ընկնում պատկերաւոր, միեւնոյն ժամանակ զուսպ հեգնանքով։

Եւս մէկ արեւանկար է տպագրուած «Լուսաբեր»-*ում՝* «Միհրան Տամատեան»։

Մտերմիկ-բարեկամական խօսքերով Վ. Թէքէեանը թուարկում է այն բաղադրիչները, որոնց միախառնումի արդիւնքում ձեւաւորուել է Միհրան Տամատեանի անհատականութիւնը. «Առէք հաւասար չափով մէյ մէկ բաժին անխարդախ ազգասիրութիւն, յեղափոխական կորովի հաւատք, խղճմտութիւն եւ տրամաբանութիւն, եփեցէ՛ք անցեալի փորձառութեանը վրայ, աւելցուցէք վրան կէս բաժին ժպիտ, որ նոյնքան բնաւորութեան բաղցրութենէ, որքան իրերու եւ մարդոց վերլուծումէն կ'ստացուի,- կ'ունենանք Միհրան Տամատեան»[37]։

Վ. Թէքէեանը Մ. Տամատեանի արեւանկարում իրար է հիւսում յուշագրային-կենսագրական տարրերն ու կերպարի խառնուածքային-տիպաբանական յատկանիշները։ «Հիմա պատնէշին վրան է նորէն, Մուրատին հետ, ոչ բոլորովին քովէ քով, ինչպէս երբեմն, այլ կանգնած անոր երկու ծայրերը, հասարակաց թշնամիին դէմ՝ գօտեպնդելով երէկուան նոյնանուն իրերամարտ զինուորները, վաղը միացնելով կասկածանքէ վեր իրենց անձերուն մէջէն»[38]։ *Տասներեք տարի տաժանակիր աքսորից յետոյ Եգիպտոս եկած Մուրատը հաշտեցնում է Հնչակեան եւ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւններին, ինչը խանդավառում է արտասահմանը (Մ. Տամատեանը վերակազմեալներից էր Վ. Թէքէեանի եւ Լ. Մկրտիչեանի հետ)։ Դիմանկարում խօսւում է նաեւ Տամատեան-Արփիա-*

36 Անդ, էջ 138:
37 Անդ, էջ 144:
38 Անդ, էջ 145:

րեան երկարժամանակեայ գժտութեան մասին, որ հարթւում է, երբ Մ. Տամատեանը «գործով եւ խօսքով» *հարուածում է Մուրատին. այն ծափահարում է Արփիարը՝ մոռանալով խռովութիւնը։ Վ. Թէքէեանը յուշագրում է.* «Տամատեանին դժբախտաբար վիճակուեցաւ ամբողջացնել այս հաշտութիւնը անոր գերեզմանին վրայ հոյակապ ճառով մը, զոր անցեալ կիրակի Գահիրէի հայ ժողովուրդը լսեց սրտաթունդ, վրիժարորդոք...»[39]։ *1908 թուականի մարտի 1ին Ա. Արփիարեանի սպանութեան կապակցութեամբ Գահիրէում կազմակերպւում է ցոյց, որին բանախօսում է Մ. Տամատեանը՝ չեշտելով, որ Ա. Արփիարեանը զոհ դարձաւ իր վերջին բացայայտումներին (իմա՝ արզուեանական ոճրագործ խմբակի վերաբերեալ բացայայտումներ. – Վ. Դ., Ն. Մ.)։*

Վ. Թէքէեանը չի նախասիրում կերպարին ներկայացնել բոլոր կողմերով, այլ շարունակում է ընտրել այն գծերը, որոնք իր կարծիքով էական են։ Արտաքին նկարագրի շարադրանքի պատկերաւորութեամբ զարմացնող Թէքէեանը շարունակում է ուրուանկարել Մ. Տամատեանին. «Քունքերը հիմա ճերմկած են եւ վարակել կ'սպառնան գլուխը, որուն վրայ մազերը, դէպի երես դարձած, կարծես քարացած են պերճախօսական շարժումի մը մէջ։ Լայն կզակը եւ անյարդար պեխերը կը միանան մազերուն՝ տպաւորութիւնը տալուն համար չափահաս առիւծի մը, որ տարիներէ ի վեր վանդակուած, pose չէր ըներ դասագիրքի պատկերներ հայթայթելու համար, եւ հիմա՛, որ վանդակին դուռը կոտրելով կրկէսին մէջ իջած է, նորէն կը թօթուի, կը դիտէ շուրջը եւ ճիշդ ու չափուած յարձակումներով կը վերագտնէ իր հին զօրութիւնն ու առուգութիւնը»[40]։ *Համեմատութիւնների մէջ սրատես Թէքէեանը մէկ նախադասութեամբ, սակայն դիպուկ ու պատկերաւոր բնութագրում է Տամատեանի խօսքի եւ իր սեփական անձի միջեւ գոյութիւն ունեցող ներդաշնակութիւնը.* «Իր անձը իր խօսքին պէս լեցուն է՝ առանց գիրութեան եւ կեանքը՝ առանց ջղայնութեան»[41]։

Վ. Թէքէեանի պատումը աչքի է ընկնում անաչառութեամբ, կերպարի հանդէպ անթաքոյց համակրանքով, նկատելի են նաեւ «դիմանկարչի» հասարակական-քաղաքական, գրական նախասիրութիւնները, որոնց փոխլրացնող շահեկան նկարագրութիւնները միայն ու միայն գրողական կենսափորձի վկայութիւնն են։

39 Անդ:
40 Անդ, էջ 144:
41 Անդ:

Իր արեւանկարների բոլոր կերպարների կենսագրութեանը քաջածանօթ է Վ. Թէքէեանը։ Հեռու մնալով կենսագրական տարրերը գերակայ դարձնելու գայթակղութիւնից՝ նա կանխահոգօրէն ստեղծում է համադրական դիմանկարներ՝ միախառնելով ակնարկը, յուշն, հազուադէպ՝ քննադատութիւնն ու կենսագրութիւնը՝ գրահմտօրէն դրանց միակցումը դարձնելով իր անձնական վերաբերմունքն արտայայտելու միջոց։

Մտերմիկ ու անմիջական, սակայն միեւնոյն ժամանակ թէքէեանական ազդեցիկ խօսքը՝ ոճի շռայլ պատկերաւորմամբ, երբեք չի ձգձգւում. գրական սեռի տրամադրած փոքր տարածքում Վ. Թէքէեանը ոչ միայն կարողանում է ստուերագծել կերպարին, այլեւ ընթերցողին փոխանցել վաւերագրական արժէք ունեցող տեղեկութիւններ։ Գրական մաքուր ճաշակով, ինքնատիպ ոճով ու պատկերաւոր, բազմազան լեզուով աչքի ընկնող Վ. Թէքէեանի դիմանկար-արեւանկարները երբեմն մտերմիկ-երգիծական շեշտերով («Ատենէ մը ի վեր վերադարձի փորձեր կ'ընէ իր երիտասարդութան սէրերուն՝ պարզապաճոյճ ֆրանսերէնով մը ծեփծեփաւոր եւ տասնվեց ակադեմականներու պարի մը մէջտեղ, որոնք շատ պիտի զարմանային, եթէ մէկը իրեն իմացնէր իրենց ոգիներուն գիշերային այդ ժամադրութիւնը»)[42], *անսպասելի համեմատութիւններով* («Տամատեանի խօսքը ուժ մըն է, աղբիւր մը, որ թեւի հաստութեամբ կը հոսի, անոր պէս կարճ ընդհատումներ ու լայն շառաչներ ունի։ Իր անձը իր խօսքին պէս լեցուն է՝ առանց գիրութեան եւ կեանքը՝ առանց ջղայնութեան»)[43] *հիացնում են ընթերցողին։*

Վ. Թէքէեանի խօսքի արժէնիշն են նաեւ այն տասնեակ հեղինակային նորակազմութիւններն ու դիպուածաբանութիւնները, որոնք ստեղծուած են ինքնադրոշմ բարեջանութեամբ՝ ընդգծելով սեփական խօսքի հանդէպ խստապահանջ գրողի նախանձնախընդրութիւնը, կերպարը լիալիր դիմանկարելու ձգտումը, այսպէս՝ ճառագայթարձակ[44], ներքնեռանդ[45], ժպտաշուրթ[46], մազամբոխ[47], ակնոցակիր[48], պարզապաճոյճ[49], մարտապետ[50], անտառածին[51], վրիժաբորբոք[52] *շարունակելի թուարկումով օրինակներ, որոնք խօսքը դարձնում են պատկերաւոր, խաղացկուն, բազմազան։*

Թէեւ «Արեւանկար» *խորագրով դիմանկարների շարքը սահմանափակւում է* «Միհրան Տամատեան» *դիմանկարով, սակայն նկատում ենք, որ գրական սեռի հանդէպ գրողի հետաքրքրութիւնը չի մարում, ընդհակառակը, յետագայում տարբեր թերթերի սիւնակներում նա զանազան առիթներով շարունակում է դիմանկարել հանրային, քաղաքական, մշակութային գործիչների՝ պահպանելով գրական սեռի հանդէպ ձեւաւորած սկզբունքային մօտեցումը, պատկերաւոր գրելաոճը, խաղացկուն, կարճ, սակայն բովանդակային առումով գերխիտ խօսքը։*

* * *

Այսպէս, Վ. Թէքէեանը, սեղմ, պատկերաւոր, բազմազան խօսքով, բառաստեղծական գիւտերով առանձնանալով գրական դիմանկարի սեռային տիրոյթում, ոչ միայն դառնում է արեւմտահայ գրական դպրոցում դիմանկարի սեռի լաւագոյն աւանդոյթների կրողն ու դրանք Սփիւռքում շարունակողը, այլեւ գրողական ինքնատպութեամբ հերոսի կեանքի տպաւորիչ դրուագները կենսագրողը՝ ժամանակաշրջանի, իրադարձութիւնների հիմնագոյնի վրայ, ուրուագծողը՝ նախընտրած կերպարի մէջ ապրող ներքին մարդուն՝ հոգեբանական, արտաքին նկարագրութիւնների գեղարուեստական ճշգրտումներով։

ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՒԹԵԱՆ – ՆՈՒՆԷ ՄԿՐՏՉԵԱՆ

42 Անդ, էջ 119:
43 Անդ, էջ 144:
44 Անդ, էջ 59:
45 Անդ :
46 Անդ, էջ 63:
47 Անդ, էջ 107:

48 Անդ, էջ 119:
49 Անդ:
50 Անդ, էջ 121:
51 Անդ, էջ 138:
52 Անդ, էջ 145:

Summary

VAHAN TEKEYAN'S "AREVANKAR" PORTRAITS SERIES

VARDUHI DAVTYAN - NUNE MKRTCHYAN

The literary genre of portrait has been widespread in the Armenian and world literature. In particular, it has acquired original, interesting manifestations under the influence of the European (especially French) literary "portrait" traditions in the Western Armenian and Diaspora Armenian literature, which is historically considered as its continuation.

The purpose of our article is to present the «Arevankar» portraits series of Diasporan-Armenian writer Vahan Tekeyan, which was published in the 90s of the 20th century on the pages of well-known and widely read Egyptian-Armenian weekly, monthly newspapers, to examine the writer's art of speech, the linguistic and stylistic features of portraits and the lexical realities.

The portraits, unfortunately, have remained in newspaper columns uncommented and little known for a long time.

The topicality of the theme is that it gives an opportunity to clarify and specify the boundaries and characteristics of the portrait genre in the Western Armenian literature.

Our task is to reveal the peculiarities of V. Tekeyan's portrait painting, to show the realistic and psychological methods of creating portraits by him, for the first time to bring to the field of knowledge the remarkable legacy of the portraits printed under the title of "Arevankar", which not only reveals V. Tekeyan's unique creative ability to choose and portray heroes, but also proves the importance of presenting materials of serious scientific value. The portraits have been presented chronologically in the article.

Using the analytical-descriptive method, we wanted to present the series of portraits created by the great writer and to examine the writer's peculiarities of characters creation.